

ԸՆԴԴԻՄԱԽՈՍՈՒԹԻՒՆ:

ՎԱՐԳԱՆ ԵՒ ՎԱՍԱԿ

(Շ-բ-ն-ն-ի-ն-ի-ն-ն ԿԵՒ ԱՐԻՄ: ԴԵԿ. 1880:)

Վասակ.

Վարդան սպարապետ, արդարեւ Սահակոյ արիւնն եւ կրում, նորա երկարախօսութեան աշակերտութեամբ. գուցէ երեւակայեցիր որ եկեղեցու մէջ աղէտ ամբօխի եւ քարոզում, բայց եւ քո այդչափ երկար ճաս ախօսութեան միտքն այսչափ եմ պատասխանում, թէ, դու քաղաքադիտութեան արհեստին բնաւ մի մտքիչափ անցեակ չես, դու միայն սովորել եւ փանական անդործ վարդապետի երկարաբանութիւնն, որ թմրեցնում, ունկնդրաց ե չի թողում մի բան հասկանալ: Ճշմարտան ասեմ, եւ ձանձրացած քննելի, երբ դու ընկած սար ու ձոր զանազան ցեղեր էիր համարում, առաքելոց պաշտօններ որոշում, թագաւորներ հաշտեցնում եւ հաշտադրի պայմաններ դրում՝ գատարի բառերով եւ անշահ փաստերով, բայց պէտք էիր սովորել փոքր ինչ քաղաքադիտութիւն, որ պահանջում է կրօնը ծածուկ հոգու եւ սրտի մէջ պահել, մտքով եւ հոգով պաշտել. խի հեթանոսաց առաջ ցոյց տալ եւ ասել թէ «ամենայն տեսակ կրօն կարելի է ճշմարիտ եւ ուղիւ ճանաչել, երբ աշխարհի յաղթողներն ընդունել են եւ հրամայում են հպատակաց ընդունել զայն»: Այժմ եր կրօնապետները փոքր ինչ քաղաքագէտ լինելին, ամեն տեղ՝ ուր շինում էին քրիստոնէից համար եկեղեցի, նորան կից կշինէին նաեւ մի մեհեան կամ ասորւշան հեթանոսաց համար. երբ մեք օտարներից պահանջում եմք կրօնական աղատութիւն, ուրեմն պարտաւոր եմք թողուլ շայտանի մէջ ասորւշաններ շինել հեթանոսաց համար, եւ ամեն մարդոյ ազատ կամաց թողուլ, որ ինչ կամի՝ այն պաշտէ:

Վարդան.

Տեր մարդկան, ներեցէք ինձ ասել, որ երբ դու իմ ընդդիմախօսելու ժամանակ թողլ եւ տալի քեզ ննջել, չես աշխատում լուրաքանչիւր փաստերիս դէմ օրինաւոր փաստ դանել ու խօսել, համոզել կամ համոզուել, ուրեմն աւելորդ է մեր վիճարանութիւնը

և աննպատակ, յամառութեամբ սուան իրրե ճշմարիտ ընդունողին ոչինչ չէ օգնում համոզելու:

Վ ասակ.

Խօսիր, բայց կարճ. և հզօր փաստերով համոզիր ինձ կամ զու ինքզ անշուշտ համոզելիք ինձ առանց յամառութեան:

Վ արքան.

Նրբ զու չկամիս համոզել, և չկամիս լսել իսկ, ուրեմն աւելի լաւն այն է՝ որ զու ինքզ առանձին խօսիր, առանց ուշադրութեամբ քննելու խօսքերդ, արդարացուր զազափարդ և հաստատիր սխալ համոզմունքդ, էլ մի աշխատիր ինձ և ազգի ամբողջութիւնը համոզելու քո սխալ և ազգակործան զազափարիդ: Ես սացիր թէ, « մեք հայերս պարտաւոր եմք տալ կրօնի ազատութիւն, շինելով նայաստանի մեջ մեհեաններ, բայց ո՛ւմ համար, նայք ինչ պարտաւոր են սյրոց համար մեհեաններ շինել. հեթանոսներն առանց մեր արգելքի կամ ընդդիմութեան շինել են իւրեանց համար մեհեաններ նայաստանի մեջ, ուր որ բնակում են: Մի՞թէ քրիստոնէական կրօնը մեր հեղինակութիւնն է կամ մեր քաղաքական կանոնադրութիւնն է, որ ըստ պահանջման ժամանակի վերաքննելի և ուղած ձևի մանէ, ո՛չ, նա անփոփոխելի, անձեռնմխելի սահմանադրութիւն է, Յիսուսի արեամբ զրւած և ընդունողի մըտաց, սրտի և հոգու մեջ տպաւորւած է: Մի՞թէ կարելի է երկու տէրանց ծառայել յարգելով հաւասարապէս, մի՞թէ կարելի է լեռան վրայ շինած քաղաքը ծածկել կամ վառած ճրագն ամանի տակ դնել: Եւք օտար ազգերից ինչ չափով և սահմանով պահանջում եմք կրօնի ազատութիւն, նոյն չափով և տալիս եմք այլոց, ոչ մեք ձեռնամուխ կլինիմք նոցա կրօնական զործերին, և ոչ նոքա էլ մեր զործին, մեք բնաւ բռնութեամբ չեմք արգելում այլակրօնութիւն, միայն պահպանում եմք մերը, նոքա էլ իրաւունք ունին պահպանել իւրեանց կրօնն, իրրե ազգային սեպհականութիւն: Միմեանց վերայ բռնանալ խղճի ազատութեան դէմ է, իսկ քարոզել և յորդորել բնական է, ամեն անհատ և ամեն ազգ աշխատում է իւր համոզմունքն ընդհանրացնել: Վրիստոսի առաքեալներն առանց բռնութեան քարոզելին և տարածելին քրիստոնէական հաւատը, մեք ևս մեր հաւատոյ ճշմարտութիւնն ամենայն

տեղ քարոզելու պարտաւոր եմք, և պաշապանելու համար մեր արիւնք թափելու եմք: Պարսիկն ազատ է քարոզել իւր կրօնը՝ Հայաստանի մէջ, բայց ոչ բնաւ զինու զօրութեամբ կամ փողով կամ փառաց և պատույ խոստմունքով կամ խարդախ վաճառականի նման զանազան ստերով խաբերայ խոստումներով և փոխարինով, այլ միայն պարզ խօսքով զովիւ իւրը և ցոյց տալ ճշմարտութիւնը: Ամեն ազգի քարոզիչներն այս արդար օրէնքով և ազատ խղճով պէտք է ընթանան, իսկ երբ մի և նոյն ազգի մէջ զուրս դան աստատման, կրօնի հակառակ զործողներ, մոլորիցուցիչ աղանդաւորներ կամ այլակրօն ազգաց զօրծիբներ, այն ժամանակ ազգի պարտքն է խրատել, սաստել, հաղածել և պատմել իբրև ազգութեան և կրօնի թշնամի համարելով նորանց, և խստիւ զգուշացնել միամտաց և ռամկաց չհեռելի մոլիկներին և զիմակաւորներին, ճշմարիտ հօր պաշտօն վարելով, անխելահաս մանուկին արգիլել վնասակար ընկերներէց և դարձելոց:

Վ. սասէ.

Ուրեմն, ես չեմ սխալուում համոզմանս մէջ, որ զու նպատակ ունիս թողուլ սպարապետութեան պաշտօնից, և վարդապետ դառնալ, զնալ աշխարհ քարոզել: Այդ որոշումի քո կամացդ է յանձնած, բայց մի աշխատիր բռնանալ խղճիս վերայ, կրօնական խիստ դասախօսութեամբդ: Առ ամբողջ կեանքդ վանքերի մէջ աստուածաբանական խնդիրների վիճարանութեամբ ես անցկացրել, Սահակ Հայրապետի խնդրանօք ստացել ես սպարապետութեան պաշտօնի առ անց սովորելու քաղաքապետութիւն և ռազմազինութիւն, յօգուտ ազգի և հայրենեաց, ուրեմն երկու տերանց ծառայել զժուար է, կամ հրաժարիք սպարապետութեան պաշտօնիցդ, կամ թող այդ վերացական մտքերդ, անօգուտ վարդապետութիւններդ, որ բոլորովին անյարմար են բարձր պաշտօնիդ: որից կախումն ունի ազգի կեանքն ու ապագայն. ամեն պաշտօնեայ իւր կոչման պիտի ծառայէ. զօրապետաց սուր, քաջութիւն և հնարազիտութիւն պէտք է, իսկ կրօնազիտութիւն, քարոզութիւն և դատարի վիճարանութիւն վարդապետաց պիտոյ է, որ անգործ կեանքը ձանձրալի չլծի նոցա, ուռնն, խմնն ազգի վաստակն, ու օղային վիճարանութեամբ միմեանց զլուխ պատառնն: Առ փոխանակ պաշտօնիդ վերաբերեալ զօրծի վերայ խօսելու, ձեռք ես տաել կրօն, որոյ վերայ խօսել մեր

նպատակից դուրս պիտի լինի, մեր պարտքն է պաշտպանել Հայրենիք լեզու և ազգ, որ է Հայութիւն:

Վարդան.

Վրիստոնէական հաւատոյ ճշմարտութիւն քարոզելն ամեն անանհատի պարտքն է, նոյնպէս և պաշտպանութիւնը. որովհետև Հայ եկեղեցին ժողովրդական է, ոչ թէ կղերական: Արքայեցւոց պէս միայն Աւետական ցեղին սեպհականեւած չէ, այլ ամենայն հաւատացեալն իրաւունք ունի նորա ներքին զործերին ձեռնամուխ լինել: Առաւարիչ, պաշտօնակատար ընտրել, ուրեմն և պարտաւոր է պաշտպանել, պարտք և իրաւունք առնչակից են: Վրիստոնէական կրօնադիտութիւնը իմ պաշտօնիս պատիւ է և փառք, առանց այդ դիտութեան ես կը դառնայի խօսուէն մեքենայ: Վու չես ցանկանում լսել ինձ, որ իրրե պատգամաւոր եկեղեցականաց, նախարարաց և համայն ժողովրդիան՝ քեզ առաջարկեցի Հայրենեաց և ազգի փափազը, կրօնի պաշտպանութիւնը, դու թոյլ տուիր քեզ արհամարհել իմ անձնաւորութիւնս իրրե անքաղաքագէտ հոգևորականի աշակերտ և անարժան սպարապետութեան պաշտօնի, բայց ես չեմ թոյլ տալի ինձ շօշափել ձեր անձնականը կամ մարդպանութեան իշխանութիւն ձեռք բերելու զործադրածդ միջոցները: Վուցե թէ ես և թէ դու անարժան եմք մեր պաշտօնին, բայց որ դիպեա՞նք արժանացրել է, յաջողել է, պարտաւոր եմք զործով ցոյց տալ ազգին և ապագային, թէ աշխատել եմք արժանացնել մեր անձը մեր բարձր կոչմանը: Աւտի ինդրիմ պատասխանիր ինձ, պարզ և բացարձակ կերպով, ի՞նչ է դիտաւորութիւնդ, ահա Յազկերտը մեծ բարկութեամբ կանչել է մեզ բոլոր նախարարներին մեր միարանութեամբ զրա՞ծ պատասխանի համար, որով հերքեցինք նորա կրօնափոխութեան առաջարկութիւնը, որով մեք բացարձակ յայանեցինք թէ, պատրաստ եմք զալ պարօից զուռը և նոյն պատասխանը տալ: Արեկ եկեղեցականաց և աշխարհականաց խառն ժողով զումարեցաւ: Մաւական միջոց սպասեցին քո գալտեան, և յետոյ միաբան վճռեցին մինչ ի մահ հաստատ մնալ քրիստոնէական ուխտի մը, կրկին երգեցին Աւետարանի վերայ, նոյն ժողովը զիս իրրե պատգամաւոր ուղարկեց քեզ մօտ լսել որոշումդ, ի՞նչ էք պատասխանում, պատրաստ ենք զնալ Յազկերտի մօտ մի և նոյն խօսքը:

կրկնե՛լ, զոր գրել եմք նորան. թէ ընդդիմանամք, սպառնալովի նա-
խապատրաստութիւն աննեմք ու պաշտպանեմք մեր կրօնը, ազգն
ու հայր եկեքը, Յազկերտի յարձակման դէմ :

Վասակ.

Այդ վերջին խօսքը, զուք առաջ կարօղ էիք ասել և զուր վե-
ճարանութեամբ ժամանակ չկորցնել : Ահիցուք թէ նպատակդ էր
դիւ և ս համոզել ձեր անհեռատես ազգակործան գործին մասնակ-
ցելու. մի՞ թէ չկարացիր իմանալ դիտաւորութիւնս, երբ չընդունեցի
ժողովի խորհրդին գալու հրաւիրադիրը, մի՞ թէ այսչափ երկար բա-
րակ ընդդիմախօսութիւնիցս պարզապէս չեմացար նպատակս, որ ես
կամաւ ազգի և հայրենեաց կործանման պատճառ չեմ լինում : Ես
արդէն շատ եմ զգջացել առաջին ժողովի մէջ ձեր հետ միաբանե-
լուս վերայ, ես չեմ ցանկանում ապագայի ստուերական յուսով
ներկայումս իբրև յանդուգն, ահիտհեմ և միանգամայն հայրենեաց
կործանիչ լինել : Յազկերտ մեզ կանչել է, մեք իբրև երզնաւ
պաշտօնեայ հոգա տակներ պարտաւոր եմք անշուշտ գնալ առանց
յապաղելու, հաստատ ապացոյցներով, վկաներով և խրդմամբ հաս-
տատել թէ մեք խարւեցանք մեր կրօնամոլ եկեղեցականաց խրատին,
խտտութեամբ պատասխանեցինք արքայի մարդասէր յորդորական
հրովարտակին, ներողութիւն խնդրենք մեծ ընծայութեք, միջնորդներով
կրկին արքայի սիրոյն արժանանանք, յանձն առնելով նորա կրօնա-
փոխութեան առաջարկութիւնը նայրենեաց և ազգի պաշտպա-
նութեան համար, իսկ եկեղեցական դասը թող ինքը խորհի իւր
անեկեքը, այլ է ազգութիւն, այլ է կրօն. խղճի ազատութեամբ կա-
րելի է ընդունել ամեն տեսակ կրօն իբրև սուրբ : Այս իմ երիտասար-
դական օրից քաջ համոզւել եմ որ, կարօղ եմք զանազան տեսակ
կրօնների բաժանել առանց փնասելոյ ազգութեան. իբրև ազատա-
միտ նայ ազատ մնալու եմք կրօնի բռնութիւնից. նայիրը կարօղ են
իւրեանց թւոյ չափով աղանդներ ունենալ և ազգի զոյութեան չը-
փնասել, բաւական է որ նայ անունը կրեն, ինչ որ կամին այն պաշ-
տեն : Մեր կրօնականներն ևս եթէ ինձ լսեն, պէտք է խօնարհին ժա-
մանակի պահանջին, լինին մոզպետ, ատրուշանապետ, այն պաշտօ-
նով ծառային ազգին, ինչպէս Տրդատի օրով հայ քրմերը զարձան
քրիստոնէական կրօնի քահանայ, ծառայեցին ազգին : Աղքա իւր-

եանց հանդիսաւ ապրուստի համար պաշտպանում են կրօնը, ինչպէս մեք մեր փառքի և պատուի համար պաշտպանում ենք ազգը: Ահա իմ վերջին նպատակը, ի՞նչ պարզ խոստովանութիւնը: Թէ համաձայնէք ինձ, հայրենեաց և ազգի պաշտպան ու փրկիչ պիտի լինիք, թէ յամառութիւր, որոշւէք և ազգի մէջ երկպառակութիւն և ներքին շփոթութիւն յարուցանէք, դուք էք պատասխանատու պատմութեան և ապագային: Աս իմ ձեռքից եկածը պիտի չխնայեմ նպատակս յառաջ տանելու, թէ չյաջողիմ իսկ, իմ խիղճս արդարացնում է ինձ. մարդոյ խիղճն է դատաւոր իւր զործերի դժոխք կամ արքայութիւնն է պատմութիւնը և ապագայն. ով չէ վախենում խղճից, պատմութիւնից և ապագայից, նա կարօղ է զործել ամեն տեսակ չարիք, կրօն, ազգ և հայրենիք այնպիսի մարդոյ ձեռքում տղայական խաղալիք են կամ իրան և այլոց փնասելոյ զործիք: Ահա ես պատրաստում եմ փութով արքայի մօտ գնալ, ապագայն թող դատէ մեզ ճշմարիտ պատմութեան վկայութեամբ:

Վարդան.

Տէր մարդպան, մասնաւորը յաճախ սխալում է, իսկ ընդհանուրը ոչ բնաւ. ազգի ընդհանրութիւնը վճռել է պաշտպանել քրիստոնէական կրօնը, Յազկերտի առաջարկութեանը ընդդիմադրելով. մասնաւորը պարտաւոր է համաձայնել ամբողջին, թէ չէ կամենում բաժանուել, կուսակիցներ որոնել եւ երկպառակութեան հիմնադիր և հեղինակ դառնալ: Մեք արդէն միաբան հաւանութեամբ զրեցինք Յազկերտի հրովարտակի պատասխանը, հերքելով նորա առաջարկութիւնը. ուխտեցինք երդումով, որ մեր արիւնը չխնայենք կրօնի և ազգի պաշտպանութեան նուիրելու. թէ Յազկերտի զրած պատասխանի և թէ Ս. Աւետարանի վերայ երդմադրի առաջին կնիքը քոնն է, մի՞թէ դու կներես քեզ ուխտադրուժ և երդմազանց լինել, թէ ազգի ներկայի և ապագայի թշուառութեան պատճառ լինել, թէ քո յիշատակը նդովելու անդի տալ եսականութեամբ: Արբ դու ուխտադրուժ կլինիս քո ազգին և Հայրենեաց, մի՞թէ օտարը կվստահի այնուհետեւ քո որ և իցէ խօսքին կամ երդմանը. էլ չես կարօղ համակրութիւն գանել ոչ քո ազգի և ոչ օտարի մօտ. մէկ կողմ գնելով Հայրենեաց օգուտը, քո անձնական շահը մտածիր գոնէ և միացիր. մեք այն, երդուել ենք հաւատարիմ մնալ Յազկերտին, բայց մեր զաշնադրի մէջ յիշւած է «կր-

բօնի աղատութիւն, երբ Յազկերտը մեղանչումէ իւր իրասման և զաշանց զէմ, մեր արածն ապստամբութիւն և անհաւատարմութիւն չի համարում, այլ օրինաւորութիւն, արդէն Յազկերտն ինքը քանդել և լուծել է զաշնագիրը: Թէ Պարսից բազմութիւնն է քեզ վախեցնում, յիշէ մեր միութիւնը, որ հրաշքնէր կարէ դործել. յիշէ Պարսից երկրի մէջ ծողած երկպառակութիւնը և չորս կողմից սահմանակից տէրութիւններէ և ճնշւած ազգերի պատերազմական պատրաստութիւնը, որ ամեն յաջողութիւն ծաղրկանէ: Աղւանից, Արաց, Ափնաց, Օօզէից, Արզուաց, Աղձնեաց, Հօնաց ազգերը մի փոքր տախթ են որոնում ապստամբելու. երբ լին մեր միանալը, բոլորը կհամաձայնեն մեզ հետ: Յազկերտի զահր մեր է և զորւելու, նորա ժառանգներն ու նախարարներն իսկ ժամ յառաջ սպասում են նորա կործանմանը: Այս հանգամանքները քաղաքադէտի հեռատես աչքից չեն կարող ծածկել. եթէ կրօնի համար էլ հարկաւոր չլինի ընդդիմանալ, զէթ ազգային անկախութեան համար աշխատելու ձիշղ ժամանակն է. զու քո սրտի և հոգու մէջ ինչ կամիս այն պաշտիր, բայց զէթ արտաքին ձեռով մեր միութիւնից մի բաժանելի, ժողովրդի երկպառակութեան պատճառ մի լինի. շատ բան կայ որ զիտել արժան է, բայց քարողել անարժան է և ֆնասակար. ժամանակի պահանջին խոնարհելու է, այս քո զաղափարդ է. ահա ժամանակի պահանջին հնազանդելու միջոցն է. ով չէ աշխատում ներկայի յաջողութիւնից օղուտ քաղել, ապաղայի վայն ու հառաչանքն է նորա բաժինը: Այս արդէն համոզել եմ, որ զու կամու չես ցանկանում միանալ մեզ հետ, բայց զէթ արտաքին ձեռով այնպէս ցոյց տուր, որ արտաքին թշնամին մեր միութիւնից երկնչի: Եթէ Յազկերտը զիտենար՝ որ մեր մէջ երկպառակութիւն կար, փոխանակ յորդորանքի հրովարտակով առաջարկելու մեզ կրօնափոխութիւն, սաստիկ հրամանով և բռնութեամբ պիտի պահանջէր, Հայոց միութիւնը նորան շատ անհանդիսա է անում: **Մ**եր ազգի շահն այժմ պահանջումէ կրօնն ու ազգութիւնը միութեան մէջ պահել: **Մ**եր հողեորականները հանդիսա կեանք փաբելու նպատակով չեն պաշտպանում կրօնը, նորա մշակ են, հովիւ են ազգի, մշակութիւնն ու հովուութիւնը ամեն արւեստներից զժւար է, թէպէտ կան բացառութիւններ. ոմանք անձնարած են և վարձկան, ինչպէս մեզանում ևս կան միայն անձնական փառքի, պատւի և

Վայելչութեան համար իշխանաւոր պաշտօնակալներ, որոց պաշտօնը հայրենեաց փնաս է, և հարստահարութիւն:

Վասակ.

Վարդան սպարապետ, զու զուր ևս աշխատում համոզել ինձ համաձայնել ձեր ազգակործան խորհրդին, մի՞թէ ևս մանուկ եմ, մի՞թէ ազէա և անխելահաս եմ. ներկայումս իմ խիղճս արդար է և հաշտ. ապագայն ու պատմութիւնը ցոյց կտան աշխարհին ձեր յիմարութիւնը և իմ խոհականութիւնը. գնա պատմիր ժողովին, թէ Վասակ մինչդեռ է Վասակ, չի թողուր իւր նպատակ:

Վարդան.

Եյն, մեր խիղճը, ներկայն, ապագայն, և պատմութիւնն ամեն բոլէ պիտի դաանն մեր նպատակն ու զործը, գնամ ահա խորհել և զործել որոց հետ որ ուխտել եմ երզմամբ պաշտպանել մեր կրօնն, ազգն ու նայրենիքը:

(Նրճո՞՞ն)

- Վաջին նայկայ նա է զաւակ,
- Մեր սուրբ կրօնին նա է հպատակ,
- Որ զանձն զոհ տայ իւր ազգին,
- Սորա լեզուն և կրօնին:
- Սեցցէ կրօն մեր լուսատու.
- Սեցցէ Եթոնն Երարատու.
- Մեռցին կրօնի ուրացողներ,
- Նայոց ազգի անարգ ցեցեր:
- Սեցցեն պաշտպանք նայ կրօնին.
- Մեռցին նենդողք նայոց ազգին,
- Սեցցէ սուրբ սէր և միութիւն,
- Սեցցէ կրօն և նայ լեզուն:

(Մեհնո՞՞ն են երկո՞՞ն ևս գործել ըստ նպատակէ իւրեանց):

ՃՄԱՐՏԱՊԱՏՈՒՄ ԱՆՄԱՀ ՊԱՏՄԻՉԳ*) ԵՂԻՇԷ, ՂԱԶԱՐ, ԵՒ ԱՊԱԳԱՅՆ:

Վարդան Մամիկոնեան համադասպ Մամիկոնեանի որդին Ս. Սահակ պարթև հայրապետի թոռն, մեծանալով Սահակ պար-

(*) Եղիշէ վարդապետ աշակերտ Սահակայ և Մեսրոբայ, ատենադպիր Վարդանայ և եպիսկոպոս Եմստունեաց (որ և ներկայ էր Երտաշատու ժողովին Յազկերտի և Միհրներսէհի հրովարտականներին պատասխանելու), ա-

Թեի մօտ ուսաւ Հայ դպրութիւնը Մեսրոպի (Հայոց գրոց գտիչ) ինամակալութեանը յանձնեաճ դպրոցի մէջ: Համազասպը իւր աներ Սահակ պարթեի խնդիրքով և միջնորդութեամբ ստացաւ սպարապետութեան պաշտօն Հայոց Վ. աամհասպուհ թագաւորից, որով Մամիկոնեան ցեղը, որ ստոր էր Հայ նախարարների կարգի մէջ, բարձրացաւ: Համազասպի սպարապետութեանը յաջորդից Վ. արզանը, որ և ստացաւ Յունաց Թէոդոս կայսրից Սարատիլատութեան պաշտօն. Սահակայ հետ դնաց Պարսից դուռը Վ. աամի մօտ, պաշտպանել Հայոց Երասչիթ թագաւորին, որին մատնած էին Հայ նախարարների, Սահակայ հետ արգելեցաւ Պարսկաստանի մէջ և յետոյ նորահետ ազատելով ընդհանուր սպարապետութեան պաշտօնով դարձաւ Հայաստան:

Երբ Յազիկերտը կամեցաւ զբազաշտ մոզի ազանդը տարածել Հայաստանի մէջ և բառնալ քրիստոնէութիւնը, Վ. արզանը իբրև կին-

կանատես վկայ է պատերազմի բոլոր հանգամանքներին, և Մամիկոնեան Գաւթիթ քահանայի խնդիրքով գրեց Վարդանանց լիակատար պատմութիւնը, Իսկ Վազար Փարպեցին աշակերտ Մեսրոպից, իւր ուսումը կատարելագործած Եթէքուսի, գրեց Հայոց պատմութիւնը Հայաստանի մէջ պատահած անցքերով, կրօնական պատերազմի պատճառաւ, սկսած 388 թ. ից, մինչ 495 թ. իւր մօտ 100 տարւայ պատմութիւններ, սորա կենդանի ճշմարտախօս վկայ են Վարդանայ և Վասակայ միմեանց հակապատկեր նպատակներին և գործերին, « Երարատ » « Պսակ » և « Փորձ » թող աշխատեն ճշմարտապատում վկայ լինել « Մեղուի » և « Մշակի » հակապատկեր գործերին, որոց հարցին նուիրեցի այս ՌԻԳՐԻԿԻՆԻՆԻՆԵՆԸ, որով պարզել եմ « Հայ կրօնի և Եզգութեան միութեան Հարցը », զոր ընդ երկար քրքրեց Հայ մամուլը:

Երարատի մէջ տպագրութեան պատրաստ են նաև Բ. և Գ. հատորները, Բ. հատորն է « Ողբերգութիւն Պարթևանց » շորս գործողութեամբ, և թատրոնական մի համառօտ տեսութեամբ:

Գ. հատորն է « Հայոց լեռքեր և Հայոց գլխեր », որ է Հայ ազգի և եկեղեցու պաշտպանող կամ հալածող Հայերի կենսագրութիւնները պատմութեան ու ապագայի վճիռներով:

Ե. յս երեք հատոր աշխատասիրութիւններս տպւելով Երարատի մէջ, նորանից արտատպուում է առանձին զիրք կազմելու, որի համար զիմուսմեմ ընթերցողաց ձեռնտուութեանը, իւրեանց բաժանորդագրութեամբ քաջալերել. երեքի բաժանորդագիրն է 80 կոպէկ, իսկ յետ ապագրութեան զիրքն արժէ 1 ռուբլի, բաժանորդաց անուանները կապին զբքի վերջումը:

դանի օրինակ կանչնեցաւ ազգասէր և կրօնասէր Հայոց պարագլուխ: Յովսէփ Եպիսկոպոսի (Պատուղիկոսի) հետ միանալով՝ Հայ Արօնականների և նախարարների մեծ ժողով գումարեց Երտաշատ քաղաքում, հերքել Պարսից կրօնափոխութեան առաջարկութիւնը, որով սկիզբն եղաւ այն պատերազմի, որոյ զրոշակի վերայ զրուած էր, « ազգ, կրօն և միութիւն »:

Երբ Յազկերտը բարկութեամբ իւր մօտ կանչեց Հայ նախարարներին, ստիպեց ընդունել կրակապաշտութիւնը, Արդանը իբրև թարգման իւր ընկեր նախարարների, հերքեց թագաւորի հրամանն աներկիւղ վտահոռութեամբ, նախարարների հետ բանտարկեցաւ, և երբ Յազկերտի պաշտական զաղանի քրիստոնեայ ներքինուց իմացաւ, որ Յազկերտը մտադիր է կոտորել նախարարներին և մեծ զօրքով Հայաստան ղիմել, քարուքանդ անել, Արդան արժան համարեց աշխարհ շահել, իւր անձը տուժել, ներքինու և Հայ նախարարների խորհրդով առ երեսու ռբացաւ քրիստոնէութիւնը, որպէս զի վերագառնալով Հայաստան, ազգի հետ միացած կուի Յազկերտի դէմ, երդւելով Եւեռտարանի վերայ մինչ ի մահ պաշտպանել կրօնն ու ազգը: Երբ Հայ նախարարների, մողերի և Պարսից զօրքերի հետ զարձաւ Հայաստան, Հայ կրօնականներն ու ժողովուրդը միացած կլան նոցա դէմ կոտորել ու բացողներին. խեղճ Արդան իւր համախոհներով անցաւ հաւատացելոց կողմը, կոտորեցին մողպիաներին և Պարսից զօրքերին: Սիւնեաց իշխան Աստակ մարդպան, որ արտի մտօք յանձն էր առել զբաղեշտի ազանդը, ուրանալով քրիստոնէութիւնը, հաստատ մնաց իւր ուրացութեան մէջ, Յազկերտի ձեռքով Հայոց վերայ թագաւորելու յուսով, մողերի հետ միաբանած՝ կուեց Հայոց հետ, բայց երբ գերի բռնեցաւ, կեղծաւորութեամբ, շողքորդութեամբ և սուրբ Եւեռտարանի վերայ երդւելով՝ սրտշտպանել քրիստոնէական կրօնն, ազատութիւն ստացաւ: Աոյն միջոցին Պարսից Աերուխտ զօրապետը Եղուանից վերայ զիմեց՝ բռնութեամբ տարածել զբաղեշտի ազանդը, բառնալ քրիստոնէութիւնը. նոքա Հայոց օգնութեանը զիմեցին, ուստի Աարդան անմիջապէս մի զօրաբաժնով գնաց օգնութիւն, որ մեծ ջարդ տուեց Պարսից զօրքերին, յաղթեց և վերագարձաւ Հայաստան:

Աարդանայ բացակայութեան ժամանակը, Ասակը կրկին Պարսից կողմն անցնելով՝ շատ աւերմունքներ արեց, շատ եկեղեցիներ մեհեան դարձրեց, կողոպտեց շատ վանքեր, բերդեր, քաղաքներ և

գեղեր, կրօնականների և նախարարների ընտանիքներին կոտորեց և ուսանողների բռնեց և բերդերի մէջ բանտարկեց. Աւարդանը քաջութեամբ դիմեց Ասասկայ վերայ, յաղթեց ու փախցրեց Ալեանայ աշեարհը, ազատեց քահանաների ընտանիքը, կործանեց ատրուշանները և կրկին եկեղեցիները նորոգեց:

Յազկերտը յուսահատուած այս անյաջողութեան վերայ, կամեցաւ թոյլ տալ իւր առաջարկութիւնը, բայց Ասասկը իւր խաբեյական խօսքերով և շողորթութեամբ համոզեց Միհրնեբէհ մեծ հազարապետին, որ առանց դժուարութեան արքայի կամքը պիտի կատարէի շայաստանի մէջ տարածելով մոզական աղանդը. նա գտաւ իւր կուսակից նախարարներ և երկու անարժան, փառամոլ քահանաներ, Աւտրոս և Օւնգակ, շայոց մէջ երկպառակութիւն ցանկեաց ասելով թէ «Յազկերտը կրօնի ազատութիւն է շնորհել, Աւարդան զուր է սպասամբել», քանտեց շատերի միաբանութիւնը, որ ունէին շայոց հետ. նամակ դրեց նաև Յունայ բաժնի շայոց վերակացու Ասսակ Մամիկոնեանին, իւր շարութեան գործակից արեց նորան, արդիկեց թէ Յունայ զօրքերի և թէ Յունայ բաժին շայաստանի շայոց օգնութիւնը: Աւարդանը ոչ մի տեղեց օգնութիւն չգտնելով, յոյսը Եստուծոյ և իւր գնտի միաբանութեան բազկի վրայ դնելով՝ պատրաստեցաւ պատերազմի Պարսից ահաւոր բազմութեան դէմ, որ Ասասկի և Մուշկան Արիսալուուրտի առաջնորդութեամբ յարձակեցան շայաստանի վերայ Երտազ գաւառի Եւարայր գիւղեմօտ, Տղմուտ գետի եզրերը: Աւարդանը քաջութեամբ սկսեց ծակատամարտը, որոյ մասնակից էին և կրօնականներ, և կանայք անգամ, 60 հազար անձինք, մեծ ջարդ տուեց Պարսից զօրքերին, ուր և ինքն ստացաւ նահատակութեան պսակ, սաստիկ յարձակման մէջ. իսկ ազգութեաց Ասասկը, որ յոյս ունէր գէթ շայաստանի աւերակաց վերայ թաղաւորելու, շարունակեց իւր խաբեբայ հնարքները, վնասեց թէ իւր հայրենեաց և թէ Պարսից զօրքերին*), որոյ վերայ սաստիկ բարկանալով Յազկերտը, մեծ անարգանքով բանտարկեց նորան, յարքունիս գրաւեց նորա ինչքն ու ստացւածքը, որդիքն ու կանայքը: Ասասկը մահապարտից բանտի մէջ որդնոսելով սատակեցաւ առանց զղջման,

(*) Պատրաստուած եմ Ասասկայ. «գառաստանն ու պատիժ» ողբերգութիւն երեք գործողութեամբ, որ կըտպւի յարմար ժամանակուս:

չարժանացաւ Հայաստանի հողի մը լժաղւելուն, կորաւ ինքն և իւր ունայն յոյսը և ստացաւ ապագայի յաւիտենական նախատինքն ու նորովքը:

Եղագոյն իճիւ-

Չիք, չիք, վատաց, չիք յաջողւած,

Յերկնից գոչէ որ Էնն Ետոււած:

Աորչին մատնիչք մարգարան Վասակ,

Սուա քահանայք, Պիարոս, Ջանգակ,

Եւ գործակից նոցին Սահակ

Ենհետացի անյիշատակ:

Հայաստանի յանդիմանա-լի-ն.

Չորանայ ձեռքն որ միշտ որոմն

Յանէ Հայոց անդաստաններ,

Աուրանայ աչքն այն վատատես,

Որ սպասէ պտուղն քաղիլ

Եմօթ, ամօթ ձեր վատ ճակտին,

Որ միշտ սիրէք զբաժանումն,

Բաժանւեցէք զուք իմ միջից,

Որ նախատինք էք Հայ անուան:

Միայն բանիւ լոկ ազգասէր

Չեանայք զուք, նենգաւորներ,

Եպականիչ չար աղուեսներ

Մատնիչք ազգի անարգ ցեղեր:

Չիք, չիք, վատաց, չիք յաջողւած

Յերկնից գոչէ որ Էնն Ետոււած:

Ելիլեցոյ պատի.

Նորահրաշ պատկաւոր, և զօրազրուխ առաքիլնեաց, վառեցար զինու Հողւոյն արխարար ընդդէմ մահու, Վարդան քաջ նահատակ, որ վանեցիր զԹշնամին, վարդազոյն արեամբդ քով, պատկեցիր զկիկեցիցին: